2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ՆԱԽԱԲԱՆ

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՉԱՓՈՒՄՆԵՐՈՎ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Է ՄՆԱԼ ԱՌԱՋԱՏԱՐ ԴԻՐՔԵՐՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԶԲԱՂԵՑՐԵԼ Է 2-ՐԴ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆԸ՝ ՄԵԾԱՄԱՍՇՏԱԲ ՀԵՌՈՒՍՏԱՆԱԽԱԳԾԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՐՁՐԱՆԱԼՈՎ 1-ԻՆ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ:

- ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՎ ԵՎՍ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼ Է ԱՌԱՋԱՏԱՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ՝ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՑՈՒՑԱՆԻՇՈՎ: ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՐԱԾ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ՝ ԱՌԱՋԻՆԸ ԱԼԻՔԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Է ՄՆԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԸ:

- ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՑՈՒՅՑ ԵՆ ՏԱԼԻՍ, ՈՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԵԼ Է: 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ 22 ՏՈԿՈՍՆ Է ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼ ՀԱՆՐԱՅԻՆԻ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆԸ, 2022 ԹՎԱԿԱՆԻՆ՝ 21 ՏՈԿՈՍԸ, ԻՍԿ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ 33 ՏՈԿՈՍ ԱՐԴՅՈՒՆՔՈՎ Է ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԸ ԶԲԱՂԵՑՐԵԼ ԱՌԱՋԻՆ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆԸ:










# ՀԵՌՈՒՍՏԱԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ





















**2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է 2 ԾԱՎԱԼՈՒՆ ԵԹԵՐԱՇՐՋԱՆ՝ ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂԻ ԴԱՏԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՎ ԱՎԵԼԻ ՔԱՆ 70 ԲԱԶՄԱԺԱՆՐ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՌԻԿ ՀԵՌՈՒՍՏԱՆԱԽԱԳԾԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՁԵՌՔ Է ԲԵՐԵԼ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՀՆՉՅՈՒՆԱՎՈՐԵԼ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՒ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԿԻՆՈՆԿԱՐՆԵՐ:**

# «ԵՐԳ ԵՐԳՈՑ. ՆՈՐ ՁԱՅՆԵՐ» ՄՐՑՈՒՅԹ

ՄԵԿ ՏԱՍՆԱՄՅԱԿԻՑ ԱՎԵԼԻ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՎ ՑՈՒՑԱԴՐՎՈՂ «ԵՐԳ ԵՐԳՈՑ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԸ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵԹԵՐԱՇՐՋԱՆՈՒՄ ՁԵՎԱՉԱՓԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵՑ՝ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ՍԻՐԱՀԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՀԱՅՏՆՎԵԼ ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐՈՒՄ: «ԵՐԳ ԵՐԳՈՑ. ՆՈՐ ՁԱՅՆԵՐ» ՄՐՑՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ՄՈՏ 400 ԿԱՏԱՐՈՂՆԵՐ ՓՈՐՁԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՈՒԺԵՐԸ. ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԵՑ ՆԱԽԱԳԾԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ: ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹԱԾ 12 ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՆ ԱՅԺՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՆ ԱՆՑԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԼՐԵԼ ՀԵՌՈՒՍՏԱՆԱԽԱԳԾԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ:





# «ԹԵԺ ԽՈՀԱՆՈՑ»

ԱՌԱՋԻՆԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԵԹԵՐԱՇՐՋԱՆԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ «ԹԵԺ ԽՈՀԱՆՈՑ» ՀԵՌՈՒՍՏԱՆԱԽԱԳԾՈՎ, ՈՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԵՐԵՄՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ։ 13 ՇԱԲԱԹՎԱ ԹԵԺ ՊԱՅՔԱՐԻՑ ՀԵՏՈ ՆԱԽԱԳԻԾ ԱՆՑԱԾ 80 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՑ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ ՍՏԱՑԱՎ 5 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ, ԻՍԿ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑԸ՝ «ԵՐԵՄՅԱՆ ՓՐՈՋԵՔԹՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ԱՆՎՃԱՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ։ ՀԵՌՈՒՍՏԱՆԱԽԱԳԻԾԸ ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՐ ՆՊԱՍՏԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՀԱՐԱՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ ԵՎ ՕԳՆԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ։











ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ






ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Է ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՎ ՀԵՌԱՐՁԱԿԵԼ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԵՐ: ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ ՀԱՆՐԱՅԻՆՆ ԱՆՑԿԱՑՐԵԼ Է 2 ՄԵԾ ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃ ԳՐԱՆՑՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ: ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՒՄ ՆԱԽԱԳԾՎԵԼ Է ՆՈՐ ՏԱՂԱՎԱՐ, ՈՐԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ ԲՈԼՈՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԻՐԵՆՑ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԲԱՆԱՎԻՃԵԼ ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՒՄ:

ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԵՐՆ ԱՆՑԿԱՑՎԵԼ ԵՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ:





# ՄԱՐԶԱԿԱՆ 2023






2023 ԹՎԱԿԱՆԸ ՀԱԳԵՑԱԾ ԷՐ ՄԱՐԶԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՈՐՈՆՔ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԸ ՀԵՌԱՐՁԱԿԵԼ Է ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՒՄ.

- ՖՈՒՏԲՈԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԽԱՂԵՐԸ ԵՎՐՈ-2024-Ի ԸՆՏՐԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ ԵՎ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ,
- ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԵՎՐԱԳԱՎԱԹՆԵՐՈՒՄ (ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ, ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆԵՐԻ ԼԻԳԱ),
- ՖՈՒՏԲՈԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐԵՄԻԵՐ ԼԻԳԱՅԻ, ԳԱՎԱԹԻ ԵՎ ՍՈՒՊԵՐԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԽԱՂԵՐԸ,
- ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ՈՒ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
- ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ՈՒ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
- ՖՈՒՏԲՈԼԻ ՄԻՆՉԵՎ 17 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ:

ՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒՑ ԶԱՏ, ՀԱՆՐԱՅԻՆԸ ՆԿԱՐԱՀԱՆԵԼ Է ՍԱՄԲՈՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՈՒ ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ԱՇՆԱՆԱՅԻՆ ԵԹԵՐԱՇՐՋԱՆՈՒՄ ՄԱՐԶԱՍԵՐ ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ «3:1» ՍՊՈՐՏԱՅԻՆ-ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ՇՈՈՒԻՆ, ՈՐԸ ԵՎՍ ԲԱՐՁՐ ՎԱՐԿԱՆԻՇ Է ԱՊԱՀՈՎԵԼ:






# «ՖԵՍՏԻՎԱՌ»

## ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ







- ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ, 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՌԱՆԸ 3 ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՐԵԼ Է «ՖԵՍՏԻՎԱՌ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԸ՝ ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՆԱԼՈՎ ԶԱՐԳԱՑՆԵԼ ՏՈՒՐԻԶՄԸ, ՆՊԱՍՏԵԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆԸ, ՀԱՆՐԱՀՌՉԱԿԵԼ ՏԵՂԻ ԱՐՏԻՍՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՔՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՆԱՁՈՐՈՒՄ, ԳԱՎԱՌՈՒՄ ԵՎ ՍԻՍԻԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ ՄԵԾԱՄԱՍՇՏԱԲ ՀԱՄԵՐԳՆԵՐ, ՈՐՈՆՑ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ 2 ՏԱՍՆՅԱԿԻՑ ԱՎԵԼԻ ԱՐՏԻՍՏՆԵՐ ԵՎ ԲԵՆԴԵՐ:
- ՀԱՄԵՐԳՆԵՐԻՆ ՆԱԽՈՐԴԵԼ ԵՆ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐ: 3 ՔԱՂԱՔՈՒՄ 91 ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ԱՆՎՃԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԱՑԵԼ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՍԵՓԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԵԿ ՕՐՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՎ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԾԱՎԱԼԻ ՎԱՃԱՌՔ: ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՐ ԵՐԵՔ ԼԵԶՎՈՎ ՏՊԱԳՐՎԵԼ ԵՆ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐ: ՓԱՌԱՏՈՆԻՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ, ՄԱՍՆԱԿՑԵԼ Է 50 ՀԱԶԱՐԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԴ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐ:
- «ՖԵՍՏԻՎԱՌ»-Ը ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ԱՇԽՈՒԺՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՂՈՐԴԵԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ. ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՐԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅԴ ՕՐԵՐԻՆ ԳՐԱՆՑԵԼ ԵՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԹՎՈՎ ԱՅՑԵԼՈՒՆԵՐ: ՓԱՌԱՏՈՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՆԱԵՎ ԱՅՍ ՏԱՐԻ՝ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՏՈՆ ՊԱՐԳԵՎԵԼՈՎ ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ:

# ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՇԻՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ







ԼՈՒՐԵՐԻ ՏԱՂԱՎԱՐ



ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՏԱՂԱՎԱՐ



«ՆՈՐ ԱԼԻՔ»

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ԾԱՎԱԼՈՒՆ ՇԻՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ:

- ԱՎԱՐՏՎԵԼ Է ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ (ՆԱԽԿԻՆ ԵՐԵՎԱՆ ՍՏՈՒԴԻԱՅԻ) ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄԸ, ՈՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔԸ ՈՒՆԵՑԱՎ 2-ՐԴ ՏԱՂԱՎԱՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՎԵԼԱՑԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ: ՍԱ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱ ԱՐԴԵՆ 2024 ԹՎԱԿԱՆԻՑ ԸՆԴԼԱՅՆԵԼ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՆԵԼ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔԻ ԵԹԵՐԱՅԱՆՑԸ:
- ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵԼ Է 7-ՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՎԵԼԱՑՎԵԼ Է ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ: ԱՅՍ ՄԱՍՆԱՇԵՆՔՈՒՄ Է ԳՈՐԾԵԼՈՒ ՆԱԵՎ «ՆՈՐ ԱԼԻՔԸ», ՈՐԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՅԺՄ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԵՆ:
- ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ: ԴՐԱՆՔ ՆԱԽԱԴԵՊԸ ՉՈՒՆԵՑՈՂ ՈՐԱԿ ԿԱՊԱՀՈՎԵՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԵՂԾԵՆ ԱՅՍ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՍՏԵՂԾՎՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՐ: ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԵԹԵՐԱՇՐՋԱՆԻՑ ԱՅԴ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ԿՆԿԱՐԱՀԱՆՎԵՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ՏԱՂԱՎԱՐՆԵՐՈՒՄ:







# ՀԱՆՐԱՅԻՆԻ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ





10 ՄԼՐԴ ԴՐԱՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԻՆԱՍՏԱՆԻՑ՝ ՀՀ ԱՄԵՆԱՄԵԾ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՏԱՂԱՎԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ. 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ՈՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 10 ՄԼՐԴ ԴՐԱՄԻ ՆԵՐԴՐՈՒՄ՝ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 8-ՐԴ ՀԵՌՈՒՍՏԱՍՏՈՒԴԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ՈՐՏԵՂ ՆԿԱՐԱՀԱՆՎԵԼՈՒ ԵՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ՄԵԾԱՄԱՍՇՏԱԲ ՆԱԽԱԳԾԵՐ։

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓՈՒԼ ԵՆ ՄՏԵԼ. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՏԵՍՔԻ Է ԲԵՐՎԵԼ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ։

ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԿԱՑՐԵԼ Է 693 ՄԼՆ ԴՐԱՄ։






# ԹՎԱՅՆԱՑՎԱԾ ՍԱՐՔԱՍՐԱՀԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ





2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՈՐԾԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ` ՏԵԽՆԻԿԱՊԵՍ ՎԵՐԱԶԻՆՎԱԾ ԵՎ ԹՎԱՅՆԱՑՎԱԾ ՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՏԱՂԱՎԱՐՆ ՈՒ ՍԱՐՔԱՍՐԱՀԸ, ՈՐԸ ՀԱԳԵՑՎԵԼ Է ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ, ՎԵՐՋԻՆ ՍԵՐՆԴԻ ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐՈՎ` ԻՐԵՆՑ ՈՂՋ ԼՐԱԿԱԶՄՈՎ, ՎԻԴԵՈ ԵՎ ԱՈՒԴԻՈ ՎԱՀԱՆԱԿՆԵՐՈՎ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԵՎ LED ԷԿՐԱՆՆԵՐՈՎ:

ՍԱՐՔԱՍՐԱՀԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱԽՍՎԵԼ Է ՄՈՏ 700 ՄԼՆ ԴՐԱՄ, ՈՐԻՑ 377 ՄԼՆ ԴՐԱՄԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ` 2020 Թ. ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՈՎ, ՄՆԱՑՅԱԼԸ ՀԱՏԿԱՑՎԵԼ Է ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ: ԱՇՆԱՆԱՅԻՆ ԵԹԵՐԱՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԱՐԴԵՆ ՆԿԱՐԱՀԱՆՎԵԼ ԵՆ ԱՅԴ ՏԱՂԱՎԱՐՈՒՄ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԷԼ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ՆՈՐ ՍԱՐՔԱՍՐԱՀՈՒՄ, ԻՆՉԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է ՀԵՌՈՒՍՏԱԿՈՆՏԵՆՏԻ ՈՐԱԿԸ:





# ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՀՄ-ի ՀԵՏ








- ՀԱՆՐԱՅԻՆՆ ԱԿՏԻՎԱՑՐԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ: 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԻ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ՄԻ ՇԱՐՔ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՓՈԽԱՅՑԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ՄԻՏՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆԸ:
- ԵՀՄ-Ի ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԵՐՈՎ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՅԱՍՏԱՆ Է ԺԱՄԱՆԵԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՆՈԵԼ ԿՈՒՐԱՆԸ ԵՎ ԾԱՆՈԹԱՑԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ, ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ԵՎ ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԻԿԱ ԾՐԱԳՐԵՐԻՆ:
- ԵՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՆՈԵԼ ԿՈՒՐԱՆԻ ԽՈՍՔՈՎ՝ ՀԱՆՐԱՅԻՆԻ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՈՐ ՏԱՂԱՎԱՐՆԵՐՆ ՈՒ ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԵՆ ՀԻԱՑՐԵԼ ԵՆ.

> “ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՆԴԵՊ ԹՎԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ, ՈՐՆ ՈՒՆԻ ՀԱՆՐԱՅԻՆԸ, ՄԵԶ ՀԱՄԱՐ ՑԱՓԱԶԱՆՑ ԳՈՎԵԼԻ Է: ԱՅՍ ԱՄԵՆԻՆ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՔԻՑ ԾԱՆՈԹԱՆԱԼԸ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ ԷՐ:”

- ՀԱՅԱՍՏԱՆ Է ԱՅՑԵԼԵԼ ՆԱԵՎ «EUROVISION NEWS EXCHANGE»-Ի ՂԵԿԱՎԱՐ ԷՄԻԼԻՈ ՍԱՆ ՊԻԵԴՐՈՆ ԵՎ ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԵԶՐԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԼՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։

- ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ ՆԱԵՎ ԵՀՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱԴԿԱ ԲԵՏՉԵՎԱՆ ԵՎ ԵՀՄ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՇԱ ՍՔՈԹԸ։ ՆՐԱՆՔ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ։

- ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱԿՏԻՎՈՐԵՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ Է ԵՂԵԼ ԵՀՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ, ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՀՄ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՆԵՐԻՆ, ՄԵԴԻԱ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻՆ, 29-ՐԴ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻՆ, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ԵՎ ԱՐԽԻՎԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ։

# ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ԵՀՄ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՈՎՍԻՍՅԱՆԸ ԵՎ ԵՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՆՈԵԼ ԿՈՒՐԱՆԸ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ԵՀՄ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ։ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է, ՈՐ ԵՀՄ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ԿԱՆՑԿԱՑՆԵՆ Ե՛Վ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, Ե՛Վ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ։



# ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ԲԱՑՎԵԼ ԵՆ ՆՈՐ ԲԱԺԻՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՈՐԱԿՅԱԼ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ: ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է ՆԱԵՎ ՆՈՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ «ՍՑԵՆԱՐԱԿԱՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԱՆԻՄԱՑԻԱ» ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ, ՈՐՈՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՆՑՆԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ: «ՍՑԵՆԱՐԱԿԱՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ Է ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԵՏ:

ՄԻՆՉԵՎ ՕՐՍ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱՆ ԱՎԱՐՏԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 220 ՈՒՍԱՆՈՂ, ՈՐՈՆՑԻՑ ՄՈՏ 50-Ն ԱՇԽԱՏԱՆՔԻ Է ԱՆՑԵԼ ՀԱՆՐԱՅԻՆՈՒՄ, ՄԻ ՔԱՆԻ ՏԱՍՆՅԱԿ ՈՒՍԱՆՈՂ ԷԼ՝ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ:

# ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ ԵՊՀ-ՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ ՍԿՍԵԼ Է «ՀԵՌՈՒՍՏԱԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ։ 1 ՏԱՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ ԱՅՍ ԾՐԱԳԻՐՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՕԳՆՈՒՄ Է ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԸ, ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ ՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌԵԼ ԴՐԱՆՔ։ ԴԱՍԵՐԻ ՄԻ ՄԱՍՆ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ Է ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԵՏԵՎՈՒՄ ԵՆ ՀԵՌՈՒՍՏԱԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆԸ, ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ։











# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ








ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Է ԹՎԱՅՆԱՑՆԵԼ ԵՎ ՀԱՄԱԼՐԵԼ «ՈՍԿԵ ՖՈՆԴԸ» ԱՆՑՅԱԼՈՒՄ ՆԿԱՐԱՀԱՆՎԱԾ ԲԱՑԱՌԻԿ ՈՒ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՈՎ:

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐԽԻՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝

- ԹՎԱՅՆԱՑՐԵԼ, ՄՇԱԿԵԼ ԵՎ ԳՈՒՆԱՃՇՏԿԵԼ Է 25 ԺԱՄ ԿԻՆՈԺԱՊԱՎԵՆ,
- ԹՎԱՅՆԱՑՐԵԼ ԵՎ ՄՇԱԿԵԼ Է 3700 ԺԱՄ ՏԵՍԱԵՐԻԶՆԵՐ,
- ԱՐԽԻՎԱՑՐԵԼ ԵՎ ԼՐԱՑՐԵԼ Է 3500 ԱՆՈՒՆ ՆՅՈՒԹԻ ՄԵՏԱՏՎՅԱԼՆԵՐ:

# ԵՐԿՈՒ ՆՈՐ ԱԼԻՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԱՌԱՋԻՆ
ԱԼԻՔ
ԱՄԵՐԻԿԱ

ՆՈՐ
ԱԼԻՔ

- ԱՎԱՐՏԻՆ ԵՆ ՄՈՏԵՑԵԼ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2 ՆՈՐ ԱԼԻՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ: 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆԸ ԿՈՒՆԵՆԱ ԻՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ ԱՄՆ-ՈՒՄ՝ ՀԻՄՆԵԼՈՎ «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ ԱՄԵՐԻԿԱ» ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔԸ: ԱՅՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ԱՊՐՈՂ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՍՏԵՂԾԻ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԿՈՆՏԵՆՏԸ՝ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ:

- ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿԵԼ Է ՆԱԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ ԱԼԻՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾՐԱԳԻՐ, ՈՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ ԵՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ: «ՆՈՐ ԱԼԻՔ» ԱՆՎԱՆՈՒՄՈՎ ԹՎԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԸ ԼԻՆԵԼՈՒ Է ՅՈՒՐԱՏԵՍԱԿ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ, ՈՐԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԸՆՁԵՌԻ ԿՅԱՆՔԻ ԿՈՉԵԼ ՀԱՄԱՐՁԱԿ ԵՎ ՏԱՐԲԵՐՎՈՂ ՄՏԱՀՂԱՑՈՒՄՆԵՐ:






# ՀԱՆՐԱՅԻՆԻ ՀԵՌՈՒՍՏԱԱՐՏԱԴՐԱՆՔԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃՈՒԿԱՅՈՒՄ





ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ MEZZO TV-Ն ՁԵՌՔ Է ԲԵՐԵԼ «ՍԻՄՖՈՆԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՆԱԽԱԳԾԻ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՄԲԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԴ ՀԱՄԵՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ «ՔԱՈՍ» ԵՎ «ՃԱՀՄԱՐԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ» ՀԵՌՈՒՍՏԱՍԵՐԻԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՆԵԼ Է ՌՈՒՍԱԿԱՆ «ТРИКОЛОР» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ: ԴՐԱՆՔ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՑՈՒՑԱԴՐՎԵՆ ՌԴ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԱԾՔՈՒՄ: «ТРИКОЛОР»-Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԹԻՎԸ, ՎԵՐՋԻՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ, ՄՈՏ 13 ՄԼՆ Է: ՀԵՌՈՒՍՏԱՍԵՐԻԱԼՆԵՐԸ ՀՆՉՅՈՒՆԱՎՈՐՎԵԼՈՒ ԵՆ ՌՈՒՍԵՐԵՆՈՎ:


ՀԱՅԱՍՏԱՆ
«ՍՏԵՂԾԻ՛Ր ՔՈ ՖԻԼՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՆԱԽԱԳԾԻ ՄԵԿՆԱՐԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՆՔՆԵՐԻ (ԼՈԿԱՑԻԱՆԵՐԻ) ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ՈՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է ՄԵԿ ԿԱՏԱԼՈԳՈՒՄ ՀԱՎԱՔԱԳՐԵԼ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐ ԼՈԿԱՑԻԱ:

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ Է ՆԱԵՎ ՀՀ ԷՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ ԵՎ ԵՐԿՈՒ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՍՏԱՑԵԼ (ՄՈՏ 12.9 ՄԼՆ ԴՐԱՄ) ԾՐԱԳՐԻ ՄԻ ՄԱՍԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ:
















# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

- ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ 500-ԻՑ ԱՎԵԼԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

- ԲԱՐԵՓՈԽՎԵԼ Է ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ: ՆԵՐԴՐՎԵԼ Է ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼ ՃԿՈՒՆ ՀԱՄԱԿԱՐԳ:

- ՀԱՆՐԱՅԻՆՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ, ՈՐՏԵՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԱՆՎՃԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ: 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՄՈՏ 250 ԱՇԽԱՏԱԿԻՑ ԱՆՑԵԼ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ:

# OTT ՀԱՎԵԼՎԱԾԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ




ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՎԱՐՏԻՆ ԵՆ ՄՈՏԵՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ OTT ՀԱՐԹԱԿԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ: ՀԱՆՐԱՅԻՆԻ ՀԵՌՈՒՍՏԱԱՐՏԱԴՐԱՆՔՆ ԱՅՍՈՒՀԵՏ ՀԱՍԱՆԵԼԻ Է ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ «1TV ARMENIA» ՀԱՎԵԼՎԱԾՈՎ, ՈՐԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱ ԴԻՏԵԼ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԸ, ԱՌԱՋԻՆԻ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱԼԻՔԸ ԵՎ ԱՌԱՋԻՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԼԻՔԸ ԱՇԽԱՐՀԻ ՑԱՆԿԱՑԱԾ ԿԵՏԻՑ, ՀԵՏԵՎԵԼ ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՐԶ ՔԱՅԼՈՎ:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՐԹԱԿՆ ԱՆՎՃԱՐ Է ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄ ՉԻ ՊԱՀԱՆՋՈՒՄ: ՀԱՎԵԼՎԱԾԸ ՀԱՍԱՆԵԼԻ ԿԼԻՆԻ ANDROID, ANDROID TV, IOS, APPLE TV, ROKU, AMAZON FIRE TV ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ: